Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.

- 1) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի՝ 4 /չորս/ հատ,
 - 2) օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի՝ 3 /երեք/ հատ,
 - 3) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման՝ 1 /մեկ/ հատ,
 - 4) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու՝ 14 /տասնչորս/ հատ:
 - 5) հոգեհանգստի ծառայության մատուցում՝ 1/մեկ/ հատ,
 - 6) տեխնիկական հեղուկների վաճառք՝ 1/մեկ/ հատ,
 - 7) ժամը 24-00-ից հետո աշխատանք՝ 2 /երկու/ հատ:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

23 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թ. դեկտեմբերի 23-ի
N 1198 որոշման



**ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգ անուն/ կամ կազմակերպության անվանումը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Տեղական տուրքի տեսակը	Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը
1.	ԱՅ Քնարիկ Վարդանյան	Ք. Հրազդան, Վանատուր թ-ս 431	Ք. Հրազդան, Վանատուր թ-ս 20/2	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 26 քառ/մ, ոչ հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
2.	ԱՅ Քնարիկ Վարդանյան	Ք. Հրազդան, Վանատուր թ-ս 431	Ք. Հրազդան, Վանատուր թ-ս 20/2	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 26 քառ/մ, ոչ հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
3.	ԱՅ Ալլեն Մարգարյան	Ք. Հրազդան, Նոյեմբերյան փ.7	Ք. Հրազդան, Մկրտչյան թ-ս 2, 221, 1-ին հարկ	ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք	մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
4.	ԱՅ Ալլեն Մարգարյան	Ք. Հրազդան, Նոյեմբերյան փ.7	Ք. Հրազդան, Մկրտչյան թ-ս 2, 221, 1-ին հարկ	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք	մինչև 200 քառ/մ, հիմնական շինություն	2022 թվականի 4-րդ եռամսյակի համար
5.	ԱՅ Արտակ Մարգարյան	Ք. Հրազդան, Ապանդարյան փ., 2-1	Ք. Հրազդան, Կենտրոն թ-ս 45/5	տեխնիկական հեղուկների վաճառք	հիմնական շինություն	2022 թվականի տարվա համար

6.	<<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7-1-52	Ք. Հրազդան	Արտաքին գովազդ /Team/	54 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
7.	<<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7-1-52	Ք. Հրազդան, Ազատամարտիկների ի փ.	Արտաքին գովազդ՝ ավի- սափրոտի պարունակությունը մինչև 20 տոկոս /Կլիկվա/	36 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
8.	<<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7-1-52	Ք. Հրազդան, Հանրակացարան, Անդրանիկի փ	Արտաքին գովազդ /Ոսկե հասկ/	36 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
9.	<<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7-1-52	Ք. Հրազդան, քաղաքի մուտք, Կոճուր թ-ս Ֆիդայիների փ.	Արտաքին գովազդ /Ոսկե հասկ/	36 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
10.	<<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7-1-52	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս	Արտաքին գովազդ /Արմավիր դենտ/	18 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
11.	<<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7-1-52	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս	Արտաքին գովազդ /Էդուենս/	18 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
12.	<<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7-1-52	Ք. Հրազդան, Կենտրոնական գրասյուզի	Արտաքին գովազդ /Ազաթ/ սիթի Ֆորմատ	4.8 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
13.	<<Իմիջ Մ.Գ.>> ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7-1-52	Ք. Հրազդան, Կենտրոնական գրասյուզի 2.3.4.5.6	Արտաքին գովազդ /Ինքնագովազդ/ սիթի Ֆորմատ	24 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
14.	<<Բիթիկ սերվիս.>> ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7-1-9	Ք. Հրազդան, Զրառատ խաչ, օդակաձև ծաղկանոց	Արտաքին գովազդ /Ռեդ Ինվեստ/	18 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
15.	<<Բիթիկ սերվիս.>> ՍՊԸ	Ք. Երևան, Նալբանդյան 7-1-9	Ք. Հրազդան, Զրառատ խաչ, օդակաձև ծաղկանոց	Արտաքին գովազդ /Կեչառիս/	18 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
16.	ԱՁ Ասատրյան Արմինե	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 64/14	Ք. Հրազդան, Հայ Ֆիդայիների փողոց	Քաղաքացիական հոգեհանգստի ծառայությունների մատուցում	սպորտի հիմնական շինություն	2022 թվականի տարվա համար
17.	ԱՁ Մխիթարյան Նարազսիա	Ք. Արմավիր Երիտասարդական փ. 13/3	Ք. Հրազդան, Մ. Բաղրամյան թ-ս, 5փ., 1-ին նրբ. թիվ 2	Արտաքին գովազդ	2 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
18.	ԱՁ Մանուկյան Վարդուհի	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 252/3	Ք. Հրազդան, Միկրոշրջան թ-ս 32 շենքի դիմաց	Արտաքին գովազդ	1 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
19.	ԱՁ Ավագյան Նորայր	Ք. Հրազդան, Չարենց փ 9	Ք. Հրազդան, Չ. Անդրանիկի 6	Արտաքին գովազդ	2 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար

20	ԱՁ Շամխայան Գենարի	Ք. Հրազդան, Մխկրոշոջան թ-ս 89/9	Ք. Հրազդան, Ձ. Անդրանիկի 107/3	Արտաքին գովազդ	1 ք/մ	2022 թվականի դեկտեմբեր ամսվա համար
21.	ԱՁ Պետրոսյան Մասիս	Ք. Հրազդան, Մխկրոշոջան թ-ս 106/22	Սուլակ 5-րդի. 11 նրբ 16	ոգելից և ավիոհոլային խմիչքների իրացում	Հիմնական շինություն , մինչև 500 ք/մ	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ դեկտեմբերի 31-ը
22.	ԱՁ Պետրոսյան Մասիս	Ք. Հրազդան, Մխկրոշոջան թ-ս 106/22	Սուլակ 5-րդի. 11 նրբ 16	հանրային սենդի կազմակերպում	Հիմնական շինություն , մինչև 500 ք/մ	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ դեկտեմբերի 31-ը
23.	ԱՁ Բաղդասարյան Արտուշ	Ք. Մեծամոր	Քաղսի 10փ, 6-րդ նրբ 17/1	ոգելից և ավիոհոլային խմիչքների իրացում	Հիմնական շինություն , մինչև 100 ք/մ	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ դեկտեմբերի 31-ը
24.	ԱՁ Բաղդասարյան Արտուշ	Ք. Մեծամոր	Քաղսի 10փ, 6-րդ նրբ 17/1	ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում	Հիմնական շինություն , մինչև 100 ք/մ	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ դեկտեմբերի 31-ը
25.	ԱՁ Պետրոսյան Մասիս	Ք. Հրազդան, Մխկրոշոջան թ-ս 106/22	Սուլակ 5-րդի. 11 նրբ 16	Ժամը 24-00-ից հետո աշխատելու	Հիմնական շինություն	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ դեկտեմբերի 31-ը
26.	ԱՁ Բաղդասարյան Արտուշ	Ք. Մեծամոր	Քաղսի 10փ, 6-րդ նրբ 17/1	Ժամը 24-00-ից հետո աշխատելու	Հիմնական շինություն	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ դեկտեմբերի 31-ը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2022թվականի N 1199

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 14-ի N 07-Ն որոշման հավելվածը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- 1.Տրամադրել թույլտվություններ՝ համաձայն հավելվածի.
 - 1) օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացման՝ 2 /երկու/ հատ,
 - 2) ժամը 24:00-ից հետո աշխատանք՝ 2 /երկու/ հատ:
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

26 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՑՈՒՑԱԿ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Հ/Հ	Իրավաբանական անձի անվանումը/անուն, ազգանուն/ կամ կազմակերպության անվանումը	Իրավաբանական հասցե	Գործունեության հասցե	Տեղական տուրքի տեսակը	Շինության տեսակը, մակերեսը՝ քառ/մ	Թույլտվության տրամադրման ժամանակահատվածը
1.	ԱԶ Հակոբյան Համբարձում	Ք. Հրազդան, Մ. Բաղրամյան 6	Երևան-Սևան-42կմ/3	ոգելից և ավերիկային խմիչքների իրացում	մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մարտի 31-ը
2.	ԱԶ Սաղաթեյան Արսեն	Ք. Հրազդան, Շինարարների 19	Երևան-Սևան-42կմ/1	ոգելից և ավերիկային խմիչքների իրացում	մինչև 100 քառ/մ, հիմնական շինություն	2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի մարտի 31-ը
3.	ԱԶ Հակոբյան Համբարձում	Ք. Հրազդան, Մ. Բաղրամյան 6	Երևան-Սևան-42կմ/3	Ժամը 24-00-ից հետո աշխատելու	Հիմնական շինություն	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը
4.	ԱԶ Սաղաթեյան Արսեն	Ք. Հրազդան, Շինարարների 19	Երևան-Սևան-42կմ/1	Ժամը 24-00-ից հետո աշխատելու	Հիմնական շինություն	2023 թ. հունվարի 1-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2022թվականի N 1200

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԻ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Սմբատ Անդրանիկի Դավթյանի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի դիմումը, «Կոտայքի մարզ» նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 27-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված սեղանամատյան թիվ 11151,11152, ժառանգական գործ թիվ 471, 472, 1984 թվականի հունիսի 17-ի անհատական բնակելի տան տեխնիկական պասպորտը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022LHJH2C ծածկագիրը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Օրինական ճանաչել Սմբատ Անդրանիկի Դավթյանին պատկանող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ա.Խանջյան փողոց 15 հասցեում գտնվող 623.0 քմ հողամասում (40.0 քմ ընդհանուր համատեղ սեփականություն) ինքնակամ կառուցված 3.97 քմ մակերեսով բնակելի տան աստիճանահարթակը:
2. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Ինքնակամ կառուցված բնակելի տան աստիճանահարթակը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:
4. Ինքնակամ կառուցված բնակելի տան աստիճանահարթակի պահպանումը չի

խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



26 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2022թվականի N 1201

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԱՍՏԻՃԱՆԱՀԱՐԹԱԿԻ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Համլետ Անդրանիկի Դավթյանի լիազոր անձ՝ Ռիմա Արարատի Հայրապետյանի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի դիմումը, <<Կոտայքի մարզ>> նոտարական տարածքի նոտարի կողմից 2022 թվականի հոկտեմբերի 27-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ գրանցված սեղանամատյան թիվ 11149, 11150, ժառանգական գործ թիվ 471, 472, 1984 թվականի հունիսի 22-ի անհատական բնակելի տան տեխնիկական պասպորտը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022G9VCXA ծածկագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Օրինական ճանաչել Համլետ Անդրանիկի Դավթյանին պատկանող Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Ա.Խանջյան փողոցի 15/2 հասցեում գտնվող 382.0 քմ հողամասում բնակելի տան ինքնակամ կառուցված 6.52 քմ մակերեսով աստիճանահարթակը:
2. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԵՈԼԵՆԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Ինքնակամ կառուցված բնակելի տան աստիճանահարթակը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարները չեն գանձվում:

4. Համլետ Անդրանիկի Դավթյանին պատկանող Հրազդան քաղաքի Աղբյուրակ թաղամասում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամաս Ա.Խանջյան փողոց 15/2:
5.Ինքնակամ կառուցված բնակելի տան աստիճանահարթակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
6.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

26 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2022թվականի N 1202

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ» ՀԻՄՆԱՐԿԻՆ ԳՈՒՅՔ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի N 240 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Բելառուս 82.1 ԱՏԳ անիվավոր տրակտորի՝ համայնքի սեփականություն հանդիսացող, 900 000 /ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ արժեքով հրող թևը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



26 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2022թվականի N 1203

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՂ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին
մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022
թվականի դեկտեմբերի 09-ի N 241 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղքատապարտություն և սանամաքում» հիմնարկին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղլույս» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն հավելված 2-ի:
3. «Հրազդան համայնքի Սոլակի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն հավելված 3-ի:
4. «Հրազդան համայնքի Քաղսիի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն հավելված 4-ի:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

26 դեկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան



ՑՈՒՑԱԿ

Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկին տրամադրվող գույքի

Ը/Ը	Գույքի անվանումը	Քանակը, հատ	Գույքի արժեքը ՀՀ դրամ
1.	Աղբաման դրսի	1	7790
2.	Աղբաման դրսի	5	85000
3.	Աղբաման մեծ	3	69000
4.	Աղբաման մեծ	2	40000
5.	Աղբաման փոքր	9	180000
6.	Հրող թև	1	900000

ՑՈՒՑԱԿ

Հրազդանի համայնքապետարանի «Հրազդանքաղլույս» համայնքային ոչ առևտրային
կազմակերպությանը տրամադրվող գույքի



Հ/Հ	Գույքի անվանումը	Քանակը, հատ	Գույքի արժեքը ՀՀ դրամ
1.	Լուսային ազդանշաններ	1	16200000
2.	JKM400m-72H արևային Ֆոտ.16կվտ.կայան	1	5040000
3.	Էլեկտրական սյուներ	40	324160
4.	Լուսատու/svitilnik	179	215710
5.	Էլեկտրական սյուներ իրենց Լուսամփոփներով	221	3739063,3
6.	Փողոցային լուսավորության ցանց	1	20811411
7.	Բեմի լուսատու	1	65000
8.	Բարձր լարման գծեր	1	300000
9.	Ցածր լարման գծեր	1	500000
10.	Ցածր լարման գծեր	1	300000
11.	Փողոցային լուսավորություն	1	120000
12.	Փողոցային լուսավորության ավտոմատ ռեժիմի կարգավորիչ	3	244350
13.	Ձոր-Բարձր լարման էլ.գծեր թիվ 5 հ.	5	520700

Հավելված 3
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի դեկտեմբերի 26-ի
N 1203 որոշման



ՑՈՒՑԱԿ

«Հրազդան համայնքի Սոլակի նախադպրոցական ուսումնական հաստատություն»
համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրվող գույքի

Հ/Հ	Գույքի անվանումը	Քանակը, հատ	Գույքի արժեքը ՀՀ դրամ
1.	Մանկապարտեզի շենք	1	955110
2.	Խոհանոցի շենք	1	22930



ՑՈՒՑԱԿ

«Հրազդան համայնքի Քաղսիի նախագարդոցական ուսումնական հաստատություն»
համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրվող գույքի

Հ/Հ	Գույքի անվանումը	Քանակը, հատ	Գույքի արժեքը ՀՀ դրամ
1.	Մանկապարտեզի շենք	1	26222554,1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2022թվականի N 1204

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ,
ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՄԱԲՐՈՒՄ» ՀԻՄՆԱՐԿԻՆ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին
մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022
թվականի դեկտեմբերի 23-ի N 255 որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդանի համայնքապետարանի «Կոմունալ տնտեսություն, աղքատապարտություն և
սանմաքրում» հիմնարկին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել
համայնքի սեփականություն հանդիսացող LiuGong 4215D-AWD ավտոգրեյդերը
(սերիական համարը N CLG4215DANL010721, շասսի GJ2227526, շարժիչը N 90230490
թողարկման տարեթիվը 2022թ.) 73,900,000 /յոթանասուներեք միլիոն ինը հարյուր
հազար/ ՀՀ դրամ արժեքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



26 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2022թվականի N 1205

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԶԷ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2022թվականի N 1206

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՁԷ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 դեկտեմբերի 2022թվականի N 1207

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԶԷ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022 թվականի N 1208

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N12-Ն հրամանի հավելված N1-ի 8.4 կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հրազդանի համայնքապետարանի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված 2022 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 11:30-ին անցկացվող մրցույթի հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան



Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի դեկտեմբերի 27-ի
N1208 որոշման

28/12/2022

11:30

27/12/2022 11:35:55

ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ (ծածկագիր՝ խմբ-2_221228_1130)

Հանձնաժողովի կազմը

Ռոբերտ Դանիելյան

Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Աշխատակազմի քարտուղար

Գեղամ Հակոբյան

Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ

Սամվել Մահակյան

Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Գլխավոր մասնագետ

Արմեն Հակոբյան

Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ

Ղևոնդ Կասպարյան

Հաստատությունը՝ Ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ

Գևորգ Գրիգորյան

Հաստատությունը՝ Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
Պաշտոնը՝ Թիվ 8 հիմնական դպրոց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022թվականի N 1209

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N12-Ն հրամանի հավելված N1-ի 8.4 կետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հրազդանի համայնքապետարանի համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված 2022 թվականի դեկտեմբերի 28-ին՝ ժամը 14:30-ին անցկացվող մրցույթի հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան



Հավելված
Հրազդան համայնքի ղեկավարի
2022 թվականի դեկտեմբերի 27-ի
N 1209 որոշման



28/12/2022

14:30

27/12/2022 14:30:28

ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ (ծածկագիր՝ խմբ-3_221228_1430)

Հանձնաժողովի կազմը

Արևիկ Եփրեմյան

Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ

Գևորգ Արրահամյան

Հաստատությունը՝ Համայնքապետարան
Պաշտոնը՝ Բաժնի պետ

Սուտանեա Մկրտչյան

Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Ավագ մասնագետ

Ռոբերտ Թումոյան

Հաստատությունը՝ Մարզպետարան
Պաշտոնը՝ Գլխավոր մասնագետ

Անդրանիկ Բաբայան

Հաստատությունը՝ Ավագանի
Պաշտոնը՝ Ավագանու անդամ

Նորիկ Միմոնյան

Հաստատությունը՝ Գիտական հաստատությունների ներկայացուցիչներ
Պաշտոնը՝ Թիվ 10 ավագ դպրոց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022թվականի N 1210

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Սամվել Սանամյանի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն Չալազյան փողոց թիվ 8/1 տան բնակիչ Սամվել Սանամյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2005448, տրված՝ 2005 թվականի դեկտեմբերի 14-ին) Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան հյուսիս-արևմտյան թաղամաս 82:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



27 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022թվականի N 1211

**ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 6-րդ բաժնով, հիմք ընդունելով Յուրիկ Պետրոսյանի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող Յուրիկ Պետրոսյանի նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամաս 6/10 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 20122022-07-0108, գաղտնաբառ՝ PFMZRZLD5QRP) առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի կառուցման համար՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 դեկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ**

N 129 27 դեկտեմբեր 2022թ

Տրված է
կառուցապատող

ՅՈՒՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ՀՀ, ԿՈՏԱՅՔ, ԱՌԻՆՔ, Զագալանք, 4-րդ փկղ., տուն 6

(Պրավաքանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը)

Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, ք. Հրազդան, Կենտրոն թաղամաս 6/10 հասցեում

(ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

Առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկաման շենքի, միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիա), , (10.0x5.0 մ հատակագծային չափերի միահարկ շինություն)

օբյեկտի

(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

կառուցման

շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝

(նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուղղղացման և այլն)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների

տեղադրման համար:

(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1.Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝
1)մշակվել են

աշխատանքային նախագիծ „ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ,, ՍՊԸ

(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը,

Արտոնագիր ԵԲԴ-Ա-085, ԿԵԴ-Ա2-007

կողմից,

(իջնագիայի համարը)

2)ստացել է (են) թ. N փորձագիտական դրական եզրակացությունը

(եզրակացությունները)

(նշել փորձաքննության տեսակը)

կողմից

(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, (իջնագիայի համարը)

կամ նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝

23/12/2022 թ. N 786/22

(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3)սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների

**ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
27.12.2022**

հետ:

(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2.Շինարարական

աշխատանքներն իրականացնել **27 դեկտեմբեր 2022 - 27 դեկտեմբեր 2024** ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տեղությունը)

ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն

ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝

[] ավարտական ակտի տրամադրումից մեկ ամսվա ընթացքում,

[] ավարտական ակտի տրամադրման օրը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է 82 էջից, կարված և դրոշմակնքված է Հրազդանի համայնքապետարանի կողմից:

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են

(լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում)

կողմից

(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի

և այլ

(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների

հետ:

(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) Կառուցապատողը նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ:

2) Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

3) (լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում) սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը

(նշվում են նախապատրաստման, իրականացման, շինմոնիտինգային աշխատանքները և այլ աշխատանքները)

6. (լրացվում է N1 հավելվածի 13-րդ կետով սահմանված դեպքերում)

Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության

(շինությունների)

քանդման՝

(նշվում են ամրոցողությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին)

(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

տրված սույն թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կ.Տ.

ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022թվականի N 1212

ԱՐՄԵՆ ԱՂԱՍԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ մասով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 228-րդ շենքի թիվ 70 բնակարանի բնակիչ Արմեն Աղասարյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 29042022-07-0013, գաղտնաբառ՝ TDLY9HSA6UBR) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 14-րդ փողոց 38 հասցեում գտնվող բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 դեկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022թվականի N 1213

ԱՐՎԵՍՏԱՆՈՑԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ, 8-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով Արսեն Բաղդասարյանի 2022 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Երևան քաղաքի Գ-1 թաղամասի 10/19 տան բնակիչ Արսեն Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 2575550, տրված՝ 2010 թվականի փետրվարի 22-ին) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամաս թիվ 2/1 հասցեում գտնվող արվեստանոցի հասցեն փոփոխել՝ Կոտայքի մարզ, համայնք Հրազդան, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, 2-րդ շենք, 2/1 հասցեով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022թվականի N 1214

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հասմիկ Մովսիսյանի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 42 շենքի թիվ 20 բնակարանի բնակիչ Հասմիկ Մովսիսյանին պատկանող («Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ Կոտայքի մարզային մասնաճյուղի 2022 թվականի հունիսի 22-ին տրված N Կ-882 արխիվային քաղվածք) Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղում գտնվող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Լեռնանիստ, 3-րդ փողոց 43:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

27 դեկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022 թվականի N 1215

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ, 7-րդ բաժինների պահանջների, հիմք ընդունելով ԱԶ Աշոտ Հակոբյանի կողմից տրամադրված հատակագծերը և Քնարիկ Միլիտոնյանի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամասի թիվ 102 տան բնակիչ Քնարիկ Միլիտոնյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող/ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական NO6122022-07-0130, գաղտնաբառ՝ WIT1SUBFBWUA/ Հրազդան քաղաքի Մաքրավան թաղամաս 102 հասցեում գտնվող բնակելի տան 375.0քմ մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս 102/1, 350.9քմ մակերեսով բաժանվող մասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս 102/2, իսկ 1770.5քմ մակերեսով մասինը թողնել նույնը՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Մաքրավան թաղամաս 102:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



27 դեկտեմբերի 2022 թ.
ք. Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022թվականի N 1216

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Կարապետ Կարապետյանի 2022 թվականի դեկտեմբերի 20-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- Կոտայքի մարզի Քաղսի գյուղի 1-ին փողոց թիվ 30 տան բնակիչ Կարապետ Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1470788, տրված՝ 2003 թվականի հուլիսի 3-ին) Կոտայքի մարզի Քաղսի գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Քաղսի, 1-ին փողոց 30:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



27 դեկտեմբերի 2022թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022թվականի N 1217

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Կարինե Սախոյանի 2022 թվականի դեկտեմբերի 23-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Սուլակ գյուղի 7 փողոցի թիվ 14 տան բնակիչ Կարինե Սախոյանին ժառանգության իրավունքով փոխանցված /Հրազդան նոտարական տարածքի նոտարի կողմից 2009 թվականի նոյեմբերի 24-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցված գրանցամատյանում 3177, ժառանգական գործ 3177/ Կոտայքի մարզի Սուլակ գյուղում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, գյուղ Սուլակ, 7-րդ փողոց 14:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



27 դեկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության իրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 դեկտեմբերի 2022թվականի N 1218

ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ Ս.ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՆԱՄՆԱՇԵՆՔԻ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐՍՊԻ
ԵՎ ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՎԵՏԻՔ ՍՈՍԻ ԱՂԱՄԻՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով և հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի դասվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Ավետիք Սոսի Աղամիրյանի /ծնված՝ 1960 թվականի ապրիլի 26-ին, Հրազդան քաղաք Շահումյան փողոց 1-ն նրբանցք 1 տան բնակիչ/ 2022 թվականի դեկտեմբերի 16-ի դիմումը, Հրազդանի համայնքապետարանի «Կոճոռ թաղամաս» լիազոր ներկայացուցչի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 13-ին տրված տեղեկանքը, համապատասխան որակավորում ունեցող կազմակերպության կողմից չափագրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծը, չափագրման տվյալների մուտքագրման 2022ERY6BT ծածկագիրը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1.Վերականգնել Հրազդան քաղաքի Ս.Շահումյան փողոց 1-ին նրբանցք թիվ 1 հասցեում Ավետիք Սոսի Աղամիրյանին պատկանող 400.0 քմ մակերեսով հողամասի և նրա վրա ինքնակամ կառուցված 220.23 քմ արտաքին մակերեսով բնակելի տան,

ինքնակամ կառուցված 58.81 քմ արտաքին մակերեսով անասնաշենքի, ինքնակամ կառուցված 28.00քմ մակերեսով պարսպի սեփականության իրավունքը:

2.Վերականգնել Հրազդան քաղաքի Ս.Շահումյան 1-ին նրբանցք թիվ 1 հասցեում գտնվող Ավետիք Սոսի Աղամիրյանին պատկանող 400.0 քմ մակերեսով օրինական հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ Ավետիք Սոսի Աղամիրյանի սեփականության իրավունքը:

3. Ինքնակամ կառուցված բնակելի տունը, ինքնակամ կառուցված անասնաշենքը, ինքնակամ կառուցված պարիսպը, կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, օրինականացման համար նախատեսված վճարը չի գանձվում:

4.Հողամասի սահմանները որոշվում են «ՊԻՌԱՄԻԴԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից չափագրված և Հրազդան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

5. Ինքնակամ կառուցված բնակելի տունը, ինքնակամ կառուցված անասնաշենքը, ինքնակամ կառուցված պարիսպը և այդ հողամասին կից ավել օգտագործվող սահմանազատված հողամասը համապատասխանում են քաղաքաշինական նորմերին և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:

6. Ավետիք Սոսի Աղամիրյանին պատկանող պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասով բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, Հրազդան համայնք, քաղաք Հրազդան, Հարավային թաղամասի Ս.Շահումյան փողոց, 1-ին նրբանցք թիվ 1:

7.Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Ավետիք Սոսի Աղամիրյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի, բնակելի տան նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

8.Որոշման կատարման կազմակերպումն ու վերահսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:

9.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



27 դեկտեմբերի 2020թ.
ք.Հրազդան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022թվականի N 1219

ԷԴՈՒԱՐԴ ՊԱՏՎԱԿԱՆԻ ԲԱԿԼԱԶՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 11-ի N200 որոշման հավելվածը և 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N1 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի
2. Անդրանիկի պողոտա 66/10 հասցեում գտնվող 07-001-0522-0036 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 0.01222 հա մակերեսով հողամասը 1 150 000 (մեկ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) դրամ արժեքով օտարել Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Զրառատ թաղամասի թիվ 646 տան բնակիչ Էդուարդ Պատվականի Բակլաչյանին առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենք կառուցելու նպատակով:
2. Աճուրդով ձեռք բերված 0.01222 հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առավաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
3. Պարտավորեցնել Էդուարդ Պատվականի Բակլաչյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

28 դեկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2022թվականի N 1220

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱՋԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2022թվականի N 1221

ԱՐԱՐԱՏ ԱՇՈՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ
ԿԱՐԳՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջների, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 11-ի N200 որոշման հավելվածը և 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հողամասն աճուրդով վաճառելու մասին N2 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Վերին Աղբյուրակ այգեգործական զանգվածի 4-րդ փողոց 98 հասցեում գտնվող 07-001-0099-0152 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման 0.1006 հա մակերեսով հողամասը 1 725 000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) դրամ արժեքով օտարել ՀՀ Երևան քաղաքի Շարուրի փողոց 31 շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ Արարատ Աշոտի Հարությունյանին՝ բնակելի տուն կառուցելու նպատակով:
2. Աճուրդով ձեռք բերված 0.1006 հա մակերեսով հողամասի համար կնքել հողամասի առավաճառքի պայմանագիր: Պայմանագրի կետերի կատարման հսկողությունը վերապահել Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին:
3. Պարտավորեցնել Արարատ Աշոտի Հարությունյանին շինության շինարարական աշխատանքները սկսել հաստատված նախագծային փաստաթղթերի և շինարարության թույլտվության առկայության դեպքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2022թվականի N 1222

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N 1045
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 11-ի «Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքի և դրա համար առանձնացված հողամասի օտարման մասին» N1045 որոշման իրավական հղումից հանել «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով» բառերը, իսկ որոշման 2-րդ կետում «567 000 /հինգ հարյուր վաթսույոթ հազար/ դրամ» բառերը փոխարինել «858 000 /ութե հարյուր հիսունութե հազար/ դրամ» բառերով և «61000 /վաթսույնմեկ հազար/ դրամ» բառերը փոխարինել «215 000 /երկու հարյուր տասնհինգ հազար/ դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

29 դեկտեմբերի 2022թ.
ք. Հրազդան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2022թվականի N 1223

ՈՐՈՇՈՒՄԸ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱՋԷ

